ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« 30 » հունվարի 2020թ. գ. Լեռնամերձ

Հարգելի Լեռնամերձ Համայնքի բնակիչներ այսօրվա համայնքի ժողովում ես ձեզ կներկայացնեմ 2019 թ.- ի տարվա ընթացքում կատարված աշխատանքների մասին : Կներկայացնեմ նաև բյուջեի կատարողականի մասին տեղեկություններ և կխոսեմ համայնքում առկա հիմնախնդիրների մասին : Վերջում կլինի հարց ու պատասխան : Այժմ ես հերթով կզեկուցեմ թե, որ բնագավառում ինչ է կատավել և ինչ պետք է կատարվի:

1. Ֆինանսների բնագավառ :

Համայնքում 2019 թվականի ընթացքում հավաքագրվել է ընդհամենը 2424.1հազար դրամ գումար , որը կազմում է 2019 թվականի տարեկան բյուջեի կատարողականի 120.8% -ը որից
ա/ Գյուղնշանակության հողի հարկ հավաքագրվել է 609.1 հազար դրամ
բ/ Գույքահարկ հավաքագրվել է 1088.7 հազար դրամ
գ/ վարձակալական հողի հարկ հավաքագրվել է 232.6 հազար դրամ
դ/ Պետության կողմից դոտացյա 10425.2 հազար դրամ
ե/ տեղական տուրքեր 89.9 հազար դրամ
զ/ տեղական վճարների դիմաց 403.7 հազար դրամ:
է/ Ֆոնդային բյուջե 587.1 հազար դրամ:
Համայնքում սեփական եկամուտների տոկոսը կազմում է 120.8% որը լավ ցուցանիշ է:

Համայնքի բնակիչներին գյուղապետարանի աշխատանքների մասին իրազեկելու համար համայնքում տեղադրված թվով 2 ցուցատախտակների վրա փակցվել են համայնքի ղեկավարի որոշումները, կարգադրութկունները և ավագանու որոշումները:

1.Հասարակական կարգի պահպանում

Ես որպես համայնքի ղեկավար շատ կարևոր եմ համարում հասարակական կարգի պահպանությունը : Համայնքի բնակիչներից շնորհակալություն եմ հայտնում հասարակական կարգը պահպանելու համար :

2. Պաշտպանության բնագավառում

Բանակը պետք է ուժեղացնենք, պաշտպանության հիմնաքարը ամուր դնենք և հետո փոխանցենք մեր սերունդներին: Այսօր համայնքում կան զորակոչից խուսափոխ թվով 7 զինակոչիկ, որոնք գտնվում են արտ. երկրներում, մի մասը արդեն իսկ այնտեղի քաղաքացիներ են դարձել: Հարկավոր է բոլորս միասին պայքարենք և տվյալ երիտասարդներին հետ բերենք և ուղարկենք ծառայության:Մեր համայնքի համար ուղակի ամոթ է զորակոչից խուսափելը:

3. Քաղաքաշինության բնագավառ

Հարգելի համայնքի բնակիչներ, քաղաքաշինության բնագավառում ես կասեի, մենք շատ թերացումներ ունենք: Խոսքս վերաբերվում է նոր բնակարաններ կառուցողներին, խնդրում եմ շինություն կառուցելու թույլտվություն ստանալ, վերջապես դա բխում է ձեր իսկ շահերից: Համայնքում կան տներ, որոնց սեսմակայունությունը ապահովված չէ, մարդը տունը կառուցում է առանց հաշվի առնելու նախագծող կազմակերպության կարծիքը: Եվ ես որպես համայնքի ղեկավար զգալով վտանգը զգուշացնում եմ բոլոր բնակչությանը շինարարությունը կատարելուց առաջ, կատարել բոլոր փաստաթղթային աշխատանքները հակառակ դեպքում օրենքով սահմանված կարգով կկասեցվի շինարարության աշխատանքները և տվյալ անձինք կենթարկվեն պատասխանատվության:

4. Հողօգտագործման բնագավառ

Համայնքում չկան հողօգտագործման խաղտումներ: Համայնքի հողերը հսկվում են մեր կողմից: Պահպանված են պատմամշակույթային հողերը:
2019 թվականին հատատվել է հողային հաշվեկշիռը ավագանու կողմից, կատարվել է ցանքերի հաշվառում:

Հաշվառվել է բնակչությանը պատկանող անասունների և թռչունների գլխաքանակը:

5. Տրանսպորտի բնագավառ

Կառուցապատված է համայնք մտնող գլխավոր ճանապարհը, բայց տարվում են աշխատանքներ գյուղամիջյան ճանապարհը որի երկարությունը 1 կմ. է ընդգրկել որևէ ծրագրի մեջ, որպիսի կառուցվի :
2019 թվականի ընթացքում համայնքի փողոցները բարեկարգվել է:

6. Առողջապահության բնագավառ

Համայնքում չկան վարակիչ հիվանդություններ:

ա/ բուժկետից օգտվել են՝ 935 բնակիչներ
բ/ տնային կանչեր 305
գ/ անվճար ուղեգրեր են տրամադրվել 107 բնակիչների այլ բուժ հիմնարկներում ստուգվելու համար
դ/ 2019 թվականի տարվա ընթացքում ծնվել են 3 երեխաներ
Բուժ կետի աշխատանքները համարում եմ բավարար, չկան բողոքներ:

7. 2019 թվականի բյուջե

2019 թվականի համայնքի վարչական բյուջեն կազմում է 12431.7 հազար դրամ:

2019 թվականի բյուջեում նախատեսված է հետևյալ ծրագրերը.

1. Տեղական ինքնակառավարում /գյուղապետարան/ 11059.1 հազար դրամ
2. Աղբահանություն 330,0 հազար դրամ
3. Ֆոնդային բյուջե 587.1 հազար դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

1. Գյուղ տեխնիկայի ձեռքբերում
2. Համայնքի գազաֆիկացում
3. Տերմինալի տեղադրում
4. Գյուղապետարանի շենքի բացակայություն
5. 1 կմ համայնքային ճանապարհի կառուցում

Համայնքի ղեկավար Գ. Միրզոյան